

ՊՈՎ.ՊՈ.ՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐՈՒԹՅԻՆ № 33

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

# ԳԱՌՆՈՒԿԸ

(ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԵՍ ՄԵԿ ԱՐԵՐԱՎ)

Թ. Թ. Ե. Ի. Զ.

Տպ. «ԱԼ. Պ. Օ» Գիմնազիկեսկայա № 1

1918

891.995:

4-31

28.08.2012

13490

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1) Միջնադասական—հասակաւոր աշակերտ, ներկալացնող 50  
տարեկան մի յայտնի գիտական մասնկա-  
վարժի:

2) Թեմական վերատեսուչ—հասակաւոր աշակերտ:  
3) Դպրոցի տեսուչ—հասակաւոր աշակերտ:  
4) Օրիորդ Հայկանոյշ (վարժուհիներ ներկայացնող հասա-  
5) Օրիորդ Միջնադասական կառոր աշակերտուհիներ:

6) Սուրբէն

7) Արամ  
8) Կարապետ

9) Արսէն

10) Վազգէն

11) Հմայնակ

12) Վահան

13) Դպրոցի ծառան

14) Սուրբ  
15) Մարիամ  
16) Վարդուհի  
17) Տիգրանութի

18—19  
տարեկանութիւն

20—22  
տարեկանութիւն

23—25  
տարեկանութիւն

26—28  
տարեկանութիւն

29—31  
տարեկանութիւն

32—34  
տարեկանութիւն

35—37  
տարեկանութիւն

38—40  
տարեկանութիւն

41—43  
տարեկանութիւն

44—46  
տարեկանութիւն

47—49  
տարեկանութիւն

50—52  
տարեկանութիւն

53—55  
տարեկանութիւն

56—58  
տարեկանութիւն

59—61  
տարեկանութիւն

62—64  
տարեկանութիւն

65—67  
տարեկանութիւն

68—70  
տարեկանութիւն

71—73  
տարեկանութիւն

74—76  
տարեկանութիւն

77—79  
տարեկանութիւն

80—82  
տարեկանութիւն

83—85  
տարեկանութիւն

Քսանի չափ են ըոլոր աշակերտ-աշակերտուհիները,  
Անցքը տեղն է ունենում աղքատիկ միղասիան դպրոցում:

# ԳԱՌՆՈՒԿԸ

## 1 ԱՐԱՐՈՎ

Նիւքը փոխ է առնեած Հեօն Թրապիելի  
«Մարտկոց» պատմւածքից:

Ա. անգումը խաղացւած է Բուխարէս, 1913 թին:

(Դասարան: Տասնի չափ փոքր, երկու-տեղանի թեթև նստարաններ, ուսուցչի փոքրիկ սեղան և աթոռ: Գրատախտակ: Աւելի լաւ է՝ պատի վրայ դամւած լաթէ գրատախտակ՝ խորքի պատին. մեծ և հեռւից լաւ տեսանելի: Քսանի չափ աշակերտ-աշակերտուհիներ, մաքուր հագնւած, բայց աղքատիկ: Նըստած ու կանգնած՝ խօսակցում են խառն ի խուն. մէկն էլ թղթից սլաք է շինել և նետում է առատաղն ի վեր: Դասարանը այն վիճակի մէջ է, երբ զասի զանգը խփել են և վարժուհին ուշանում է մըտնելու:

Դռան մօտ են մի բանիսները, Տիգրանուհին զըլուխը կիսաբաց զանից դուրս հանել՝ նայում է:

1.

Սուլքն (Նստած տեղում ոտքի ելած) Այս լ՞նչէ, օրիորդը չի գալիս:

Հմայեակ (Գնում է զեսի պրատախտակը) Գրեմ  
որ օրիորդը ուշացաւ տառը բողէ:

Ալամ. Է՞յ, չը կեղասահս, նոր մաքրեցի:

Սուրէն. Հիւրը երես եկած պիտի լինի և նրանով  
են զբաղւած ուսուցիչները:

Մարիամ. Ապա, աղալը, ի՞նչ էք կարծում, եկող  
հիւրը երիտասարդ կը լինի, թէ ձեր:

Հմայեակ. Անշնաշա ձեր:

Կարապետ. Ո՞չ, Երիտասարդ կը լինի:

Նարդ. Երիտասարդ և բարձրահասակ:

Սուրէն. Օ՛, բարձրահասակ... կարծես տեսած լի-  
նի: Իսկ ես կասեմ՝ կարձահասակ է, նիհար և մի քիչ  
էլ կուզ:

Նարդ. Ի՞նչ գիտես, տեսել ես:

Սուրէն. Չեմ տեսել, բայց զիտեմ: Բոլոր յայտ-  
նի մարդիկ—գիտնական, վարժապետ կամ հեղինակ—  
լինում են նիհար, զեղնած և մէջքը ծուած...

Հմայեակ. Հայրիկս ասում է, որ մէջքի ծուելը  
շատ աշխատելուցն է... Եւ յետոյ, տեսել եմ ես մի  
նշանաւոր մարդու, որի ոչ մէջքն է ծուո, ոչ դէմ-  
քը գեղին, ոչ էլ ինքը նիհար:

Արամ. Չես տեսել. պարծենում ես:

Հմայեակ. Տեսել եմ: Կիրակի օրը տեսայ. ի՞նձ  
ցոյց աւին պարտէզում:

Արամ. Ո՞վ ցոյց տւաւ, ոստիկանը:

Հմայեակ. Ո՞չ, հայրիկս:

Սուրէն (Ծաղրելով) Ա՛, հայրիկդ... Յետոն, Է՛լ  
ինչ ասաց քեզ հայրիկդ:

Հմայեակ (Նեղացած) Հայրիկս սիրում է լաւ  
բաներ ցոյց տալ ինձ... «Ա՛յ, նայիր, Հմայեակ»—ասաց  
նա—«Նայիր, աս մի մեծ մարդ է»:

Նարդ. Բարձրահասակ:

Սուրէն. Գլուխը այս առաստաղին կը հասնէր:  
Կարապետ. Կոները գերանի չափ կայլին:

Վազգէն. Ատամները ուրագի նման կը լինէլին:  
Վահան (արտասանում է)—

«Քիթը կորնթարթ, ինչպէս մի բլուր,

Ատամներն ուրագ, եղունգները թուր»..

Սուրէն (Տարունակում է՝ աւելի բարձր) —

«Կուրծքը կասենաս մի լանջ է լեռան,

Մէջքը սարաժայո...

Աղսէն (Բարձր) ... «Կոները գերան»...\*)

Հմայեակ (Բարկացած) Յիմարներ էք գուը...  
Մեծ որ ասում են, խօ չի նշանակում Տորք-Անգեղ...  
Հայրիկս ասել է, որ մարզս մեծ է լինում ոչ թէ իր  
հասակովը, այլ խելքովն ու զիտութիւնով... Տեսածս  
մարզը գիտնական է, շատ բաներ է հնարել, շատ գլու-  
քէր գրել...

Կարապետ (Ծաղրելով) Հայրիկդ ասաց..

Շատերը. Օ՛, Օ՛... հայրիկը...

\*) Դ. Աղայեանի «Տորք-Անգեղ» պօէմայից:

Հմայեակ. Անպիտաններ էք դուք, ահա թէ  
ի՞նչ... (դուլս է ենում՝ մէկի վբայ յարձակւելու հա-  
մար):

Տիգրանունի (Դռան մօտից ետ է փախչում դէ-  
պի իր տեղը) Գալիս են.. շնւա, տեղերնիդ... (Ա-  
մենը շտապսվ նստոտում են):

Սուրէն (նստած) Հիւրին տեսաբ:

Տնզրանունի. Զը տեսայ: Տեսուչին և օրիորդնե-  
րին տեսայ թէ չէ՝ ետ քաշւեցի:

Կարապետ. Սպասեցէք եսնայեմ մէկ... (Ուզում  
է ելնել և դէպի դուռը դնալ):

Արամ. Նստիր տօ... յանկարծ դուռը երեսիդ  
կը բացւի և կը խայտառակւես:

Վահան. Տղերք, եկէք բոլորովին լուռ մնանք և  
ցոյց տանք որ մեր դասարանը դիտէ հիւր ընդունել:

Կարապետ. Մ'ո... ճիշտ է, լուռ մնանք...

Արամ. Ոտնաձայները լաւում են արդէն:

Սուրէն (Զիացնում է՝ նստած տեղից) Ահա այ-  
ժըմ դուռը կը բացւի և մէկ էլ տեսար տեսուչը ներս  
մտաւ արագ քայլերով, դէմքը խիստ: «Հը, ի՞նչ էք  
անում... խելօք նստել՝ հիւրին էք սպասում... Այդ  
ի՞նչ է, կարապետ, Էլի քիթդ մաքուր չի... Իսկ սա  
ի՞նչ թղթի կտորներ են գետնի վրայ»... Ասեն՝ աշ  
մի թղթի կառը էլ չկայ այստեղ. (Նստարանի տա-  
կը և ամէն կողմ է նայում):

Վահան. Եւ կարապետի ըիթն էլ շատ մաքուր է  
այսօր...

Սուրէն (Շարունակում է ձեացնել) Զեռքներիդ  
նայեմ... Հա, վատ չէ, մաքուր է կարծես.. Բայց ոչ,  
պարոն տեսուչ, «կարծես» բառը աւելորդ է. այսօր  
ամէնքիս ձեռքերը մաքուր են.. Նոյնիսկ իմսնքը...  
(Նայում է իր ձեռքերին):

Մարիամ. Զեռքերին օրինրդն է նայում, ոչ թէ  
տեսուչը... Այ, գալիս է այսպէս... (Ենում է և ձե-  
ւացնում) կաքաւի քայլերով, անցնում է նստարանների  
առջեցից... «Նայեմ, ցնյց տուր... Այդպէս չէ կարելի  
սիրելիս, աղտնա է, բարեկամս»...

Նւարդ. Է՛յ Մարիամ, ծաղրժում ես օրիորդին. Կի-  
մացնեմ, այ...

Մարիամ (Կոտրւած նստում է) Սկի էլ չեմ ծաղ-  
րում. միայն ձեացնում եմ. ի՞նչ կը լինի որ...

Հմայեակ. Է՛յ, լոեցէք, գալիս են.. Դուռը հի-  
մա կը բացւի:

Ամէն կողմից. Մ'ո, ս'ո, լոեցէք... (Դուռը ճողն-  
չում է, բայց մի վայրկեան դեռ չի բացւում):

2.

ՆՈՅՆՔ, ՏԵՍՈՒԶ, ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ  
ՍԻՐԱՆՈՅՑ ԵՒ ՀԱՅԿԱՆՈՅՑ

(Երբ ներս են մտնում, աշակերտները ոտքի  
են ենում):

**Տեսուչ** (Ամենից առաջ, արագ քայլերով զնում  
է դէպի նստարանները) Հը՝, հիւրին էք սպասում:  
Իւր է, գոհ եմ որ խելօք էք... Ապա մէկ նայեմ մա-  
քուր էք ամենքդ... Հիւրը դեռ չի եկել, բայց ամեն  
բողէ սպասում ենք նրան: Իսկ դու, Կարապետ, մա-  
քուր է այսոր քիթդ... Հա, լաւ է... (Ծիծաղ բոլորի)  
Իսկ զիտէք, տղայք, թէ սի է այն պարոնը, որ այ-  
սօր պիտի այցելէ մեզ... Զը զիտէք... Մի գիտնական  
է դա. մի շատ նշանաւոր գիտնական, որ այցելում  
է ամբողջ աշխարհի դպրոցները: Նա տեսել է և պի-  
տի գնայ տեսնելու եւրոպայի և Ասիայի բոլոր մա-  
նուկներին. Թիւրք, հայ, վրացի, ոռւս... Նոյնիսկ չի-  
նացի փոքրիկներին, այս... Իսկ զիտէք նա ինչու է  
ձանապարհորդում այդպէս և դպրոցներն է այցե-  
լում... Որպէս զի իմանայ, թէ աշխարհիս մէջ որ  
երեխաններն են ամենից խելօքները... Դէհ, այժմ  
դուք զիտէք: Եթէ ուզում էք որ դուք եղած լինէք  
խելօք մանուկներ, ձեզ պիտի պահէք լաւ և հա-  
մեսու...

**Սուրէն** (Մատին է բարձրացնում) Իսկ, պարսն,  
այդ նշանաւոր մարդը երիտասամրդ է, թէ ծեր:

**Տեսուչ** (Զարմացած) Ինչու ես հետաքրքրուում...  
Կարծեմ ծեր պիտի լինի... Ես ինքս էլ դեռ չեմ  
տեսել նրան:

**Սուրէն** (Դառնալով նւարդին) Տեսմք... Գիտէի  
որ ծեր պիտի լինէք: Նշանաւոր մարդիկ լինում են  
ծեր և նիհար:

Հմայեակ. Մէջքներն էլ ծումծ...

**Տեսուչ.** Ի՞նչ է... Ի՞նչ էք ասում... Ի հարկէ,

նշանաւոր մարդիկ մեծ մասամբ ծեր են լի-  
նում... Անշուշտ... Նշանաւոր լինելու համար՝ եր-  
կար պիտի աշխատել:

**Հմայեակ.** Բայց ես տեսել եմ մի նշանաւոր  
մարդու, պարսն, որ ծեր չէ և մէջքն էլ ծուած չէ:

**Տեսուչ.** Այն... Կայ, ինչու չէ: Այդ էլ կարելի  
է. առողջ են լինում, լաւ են պահում իրենց... Բայց  
այդ մասին մի ուրիշ անկամ... Այժմ ես գործ ու-  
նեմ դեռ ես... Եւ յետոյ՝ գիտէք, դուք դեռ փոքր էք  
այդպիսի բաների մասին մատծելու համար...

3

ՆՈՅՆԵ ԵՒ ԳՊՐՈՅԻ ԾԱՌԱՆ

Դպրոցի ծառան (Յալտնեւում է շէմքի վրայ) Պա-  
րսն տեսուչ...

**Տեսուչ.** Ի՞նչ կայ, Սարդիս:

Ճառնան. Պարսն թեմական տեսուչն է մարդ ու-  
զարկել և խնդրում է որ իսկոյն իր գրասենեակը  
զնաք:

**Տեսուչ.** Այն... Շատ լաւ, գնամ. Երեխ հիւրը  
այնտեղ է մաել նախ.. Դէհ, տղայք, խելօք եղէք  
միշտ... (Օրիորդներին) Շուտ է դեռ այսպէս նստե-  
ցնել, օրիորդներ: Թող զնան դուրսը խաղան, երբ  
հիւրը գայ—զանգը խփէք և հաւաքէք... Դէհ, դուրս  
զնացէք խաղալու, բայց նայեցէք որ չաղասաւէք:

Աշակերտները (Խոհեմում են դուրս ելնելու: Խօսակցութիւն և աղմուկ):

Տիառէջը (Դուրս է գնում):

Օք. Սիրանոյշ (Սրան-նրան) Հանդարտ, տղայք, կամաց մի քիչ, մի հրէք իրարու... Այդպէս չի կարելի, սիրելիս...

Օք. Հայկանոյշ. Ե՞ն, աղջիկներ, առանց աղմուկի, խոդրեմ...

(Դասարանը դատարկվում է քիշ-քիչ. դըսումն էլ մի քանի ըոպէ լսում են աշակերտների աղմուկները),

4.

**ՍԻՐԱՆՈՅՇ ԵՒ ՀԱՅԿԱՆՈՅՇԸ. ՅԵՏՈՅԸ**  
ՆԻՄՐԴԻ, ՍՈՒԻՐԵՆ ԵՒ ՎԱՀԱՆ

Հայկանոյշ. Ամբողջ ժամ է, որ թէ մենք ենք անհանգիստ և թէ տղաները... Իսկ հիւրը դեռ չի էլ երկում:

Սիրանոյշ. Գաղափար ունիս թէ ով է այդ Միհրանեանը, որի ընդունելութեան համար ոչ միայն այսքան սրատարով սպասում ենք, այլև դպրոցի մինչև վերջին անկիւնը մաքրել ենք և հինգ ըոպէն մի անդամ էլ նստարանների վուշին ենք սրբում:

Հայկանոյշ. Պէտք է դա այն յայտնի մանկավարժ-ուսուցիչ Միհրանեանը լինի, որ այնքան լաւ գրւածքներ ունի մանուկների հոգերանութեան մասին: Պատմում են, որ գալիս նստառ է դասի ժամանակ մի անկիւնում լուռ, ուշադրութեամբ զըննում է մանուկների գէմքերի շարժումները, արտայայտութիւնները և դրանով գաղափար կազմում մանկական աշխարհի և մանուկների միջավայրի ազգեցութեան մասին:

Սիրանոյշ. Այս, տեսուչը ասաց այդ: Իբր թէ այցելել է նա նոյն իսկ թիւրքերի դպրոցները. եղել է նաև եւրոպա, Ամերիկա, ապա և Եափոնիա, Ռուսաստան... Զարմանալին այն է, որ այդ մարզը որոնում է ամեն տեղ միայն աղքատ, աշխատաւոր ժողովրդի թաղերը և նրանց մանուկներին է, որ ուսումնասիրութեան նիւթ է դարձնում:

Հայկանոյշ. Գտնում եմ բաւական խելացի.. Հարուսաների հոգին ամեն տեղ նոյնն է...

Սիրանոյշ (Մանող Նւարդին) Ի՞նչ ես ու գում, Նւարդ, ինչու ներս եկար:

Նւարդ. Օրինք, մի ծեր պարոն է եկել՝ տեսչին է ուզում, իսկ տեսուչը չը կայ:

Սիրանոյշ (Վախիցած) Ծեր պարոն... Ո՞վ է, ի՞նչ է ուզում.. Ծառան այնտեղ չէ:

Նւարդ. Ծառան ներս չի ուզում թողնել, իսկ պարոնը կանգնել ու պնդում է, որ ունի ներս մըտնելու հրաման ձեռքին:

Սուրէն (Ներս է վազում) Օրիորդ, մի պարոն...  
Վահան (Ներս է վազում) Օրիորդ, մեր սպա-  
սած հիւրն է, ի՞նքը ասաց այդ:

Միջանոյշ (Մարսափած՝ վազում է գէպի պատր)  
Հիւրն է... Տէր Աստւած... Իսկ տեսուչը որ պուրս  
գնաց...

Հայկանոյշ. Ի՞նչ կը լինի. գնանք մենք ընդու-  
նենք... (Գնում են գէպի դուռը):

5

### ՆՈՅՆՔ, ՄԻՀՐԱՄԵԱՆ

Միջրանեան (Լաւ հազնւած մի ծերունի. Երեան  
է զալիս դռան մէջ) Ներեցէք... ալ, տեսուչը այս-  
տեղ չէ... Կարելի՞ է մանել. Զեր սպասած հիւրն  
եմ ես—Միջրանեան... Պ. թեմական տեսուչը յայտ-  
նած պիտի լինի իմ մտախն:

Միջրանոյշ. Անշուշտ, պարոն, համեցէք... Պարոն  
տեսուչը թեմական տեսչի մօտ գնաց, երեի խոկոյն  
կը գայ. Ես այսաեղի վարժուհիներից եմ:

Միջրանեան. Ուրախ եմ... իսկ օրիորդը...

Միջրանոյշ. Օրիորդ Հայկանոյշը լեզւի, իրազննու-  
թեան և նկարչութեան վարժուհին է:

Միջրանեան. Այս... լսել եմ: Թեմական տեսու-

Հը մի առանձին գովաստանքով է խօսել իհաձ ձեր նը-  
կարելու և պատմելու տաղանդի մտախն:

Հայկանոյշ. Շատ աղնիւ էր, պարոն, ևս սիրում  
եմ իմ գործը և մանուկներին:

Միջրանոյշ. Զէիք կամենալ արդեօք, պարոն, որ  
երեխաներին ներս կանչենք և դասը սկսի:

Միջրանեան. Շնորհակալ կը լինեմ, եթէ այդ  
չի զրկիլ երեխաներին խաղից:

Միջրանոյշ. Ոչ, արգէն գասի ժամանակն է:

Հայկանոյշ. Իսկ որ բաժանմունքը կը կամենաք  
մանել:

Միջրանեան. Այս որ բաժանմունքն է...

Միջրանոյշ (Այդ միջոցին զուրս է գնում և զան-  
գահարում)

Հայկանոյշ. Առաջին բաժանմունքն է այս, պա-  
րոն: (Դրսում լսում է աղմուկ մի րոպէ, յիտոյ օրի-  
որդի ձայնը, ապա տիրում է լսութիւն):

Միջրանեան. Կը մնամ այսաեղ: Շնա են աշա-  
կերտները և ի՞նչ տարիք ունին:

Հայկանոյշ. Քոան են. 7-ից մինչև 10. կէսը  
աղջիկ:

Միջրանեան. Աղքատ ծնողների զաւակներ են:

Հայկանոյշ. Գրեթէ ամէնքն էլ:

ՆՈՅՆՔ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, ՍԻՐԱՆՈՅԾ

(Ներս են մտնում կարգով աշակերտները, հետաքրքրութեամբ զննում են հիւրին, և իրար հետ փոփոխով տեղաւորում են):

Միրանոյշ. (Նրանց, փոքր ինչ լոելուց յետոյ) Ահա, տղայք, պարոնն է մեր սպասած հիւրը, որ ուզում է լսել ձեզ այսօր...

Միհրանեան (Ժպտուն՝ զննում է հեռւից ամենքին, յետոյ մի կողմ է տանում Հայկանոյշին և կամաց՝ նրան մի բան է բացատրում):

Միրանոյշ (Այդ միջոցին՝ աշակերտներին) Իսկ այժմ լուս մնացէք, բարեկամներս, և լաւ լսեցէք վարժուհուն... Մո, Հանդարտ կաց, Սուրբն... Դու, Մարիամ, գսպիր քեզ և մի խօսիր... (Դուրս է զնում):

Խորոնկ լուսթիւն է մի բոպէ:

Հայկանոյշ (Որ լսել էր Միհրանեանին, մի բոպէ դէմքը կնճռած՝ մտածում է, յետոյ հաւանութեան նշան է անում և ժպտում) Լաւ, պարոն, գըժւար չէ դա...

Միհրանեան. Խնդրում եմ կրկին, որ լինէք համառօտ և միմիայն շատ ծանօթ և շատ սովորական տեղեկութիւններ կցէք նկարին:


Հայկանոյշ. Շատ լաւ, պարոն...

(Լուսթեան մէջ նայում է աշակերտներին, ետեփ շաբքերին նշան է անում լսելու, յետոյ վերցնում է կաւիճը, քիչ մտածում և մօտենում է գրատախոտակին) Ես ուզում եմ այսօր մի բան նկարել ձեզ համար, տղայք, և նկարելով էլ պատմել... եթէ միայն լուս մնաք և հանդարտ...

Զայներ (Ուրախացած) Օ՞հ, այս, օրինըդ, բոլորվին հանդարտ... Ահա ոչ մի ձայն... Շունչներս անգամ կը պահենք... (Ամենըը զետեղում են և պատրաստում են նայելու եւ լսելու):

Հայկանոյշ. Ահա ուրեմն սկսում եմ... (Սկսում է մի կողմից նկարել և մի կողմից էլ պատմել՝ կցկրտուր \*)... Ահա ձեզ շատ ծանօթ մի պատկեր...

\*) Եթէ վարժուհի ներկայացնող աշակերտը նկարել չը գիտէ (որ հաւանական է) մնում է ահա թէ ինչ անել. Նկարել գիտցող մի ուսուցիչ կարմիր կափճով եւ շատ բարակ նախակէս (ներկայացնումից առաջ) գրատախոտակի վրայ կը նկարի պատկերը (կարդալով պիէսի մէջ նիւթը). Բեմի վրայ կարմիր գծւածը մանաւանդ գիշերով, չի երևալ: Իսկ վարժուհի ներկայացնողը պիէսի ժամանակ սպիտակ կափճով, հետզետէ պատմելու ընթացքի հետ, կը նկարի կարմիրների վրայով և երևան կը բերի ամբողջ նկարը: Կարենոր կէտ է այն, որ սպիտակ կափճով պիտի նկարի արագ. շատ աւելի արագ, քան թէ խօսում է. կարելի է նոյն իսկ նկարը երևան բերել՝ նրա կտորների մասին խօսելուց առաջ: Արագ պիտի նկարի մանաւանդ գտնուկը, որպէս զի շատ պարզ երևաց և սիրուն լինի: Գառնուկի նկարը պիտի լինի մեծ: Եյդ ձեռք պիէսը յաջող կանցնի:



(Հուռ. Նկարում է) Ծառեր... հեռում զետակ... (Երկարում է. լուռ.) Յետոյ՝ ընդարձակ, խոտաւէտ մի մարգագետին, որ զնում հանում է այդ... (Նկարում է. լուռ) ...այդ բարձր լեսներին... (Նկարում է. լուռ) Նայեցէք վեր այժմ... Օդի մէջ ահա տեսնեում են թռչուններ... ծիծեռնակներ են, չէ... Անշուշտ, ծրւըլում են, աջ ու ձախ թռչում... Բոյն են շինելու, ձագուկներ պիտի հանեն.. գարունն է եկել...

Վահան. ...«Նախշուն թերով, կարմիր վարդերով»...

Հայկանոյշ. Այն... նախշուն թերով... (Միշտ նկարում է և արագ) բայց վարդերը աւելի ուշ, Մայիսին... Առայժմ Ապրիլի մէջն ենք... Ծաղիկներ, խոն... (Նկարում է. լուռ) Այժմ գառնանք գէպի աջ... Ի՞նչ է այն... (Նկարում է. լուռ) գետնից հազիւ գուրս եկած փարախը. ոչխարների ձմեռուայ բնակարանը... (Նկարում է. լուռ) Դոան առաջ, կոճղի վրայ նստել է... (Նկարում է արագ. լուռ) Նստել է հովիւը... Զեռքին ունի... նայեցէք... (Նկարում է) մի մեծ... լայն բերանով մկրատ... Գուշակում էք թէ ինչ է ուզում անել... Զէք կարող գուշակել... Փոքր ինչ էլ սպասեցէք և կիմանաք... (Նկարում է արագ. լուռ) Նայեցէք, հովի առաջը... (Նկարում է) Ի՞նչ է այն... Ահա մի գլուխ... ոտքեր...

Ամէնքը. Ոչխար է... բրդոտ մի ոչխար...

(Հուռ է. Հայկանոյշը լրացնում է ոչխարի նկարը՝ արագ շարժումներով. ամէնքը մեծ ուշադրութիւնով հետեւում են):

Հայկանոյշ. Այն, ոչխար... Երեխ հիմա իմացաք մկրատի սնելիքը... Ո՞չ... ձմեռն անցել է, ոչխարը սկսում է տաք զգալ... պիտի հանել վրայից նրա տաք հագուստը... Եւ դիտէք թէ մարդիկ ինչեր են շինում ոչխարի բրդից... (Շարունակում է նկարել):

Ամէնքը. Հագուստ... Անկողին... Գնդակ...

Կարապետ. Իմ հագուստը բրդից է:

Վահան. Ի՞նչ էլ:

Հայկանոյշ (Միշտ նկարելով) Գիտէք նաև, որ ոչխարը մեղ միմիայն բուրդ չի տալիս... Ապա, ով գիտէ, այլես ի՞նչ է նա մեղ տալիս:

Ամէնքը. Կաթ... Մածուն... Սեր...

Հայկանոյշ. Այն, կաթ, սեր... ինչպէս և պանիր... Իսկ գիտէք թէ ինչնեւ է ոչխարը կաթ ունենում և որ ժամանակը... Զը գիտէք... Այ, լաւ նայեցէք և այժմ կիմանաք... (Նկարում է. լուռ) Ահա, ոչխարի առաջ երեւում է... Տեսէք... (Նկարում է. լուռ):

Ամէնքը. (Լուռ հետեւելուց յիտոյ) Գառնուկը... Նւազը. Օ՞հ, որքան լաւն է...

Վարդուհի (Զեռքերը իրաք զարնելով) Օ՞, անուշիկ գառնուկ... ձերմակ, ոիրունիկ...

Հայկանոյշ. Այն... մի սիրուն, ա՞մեղ, փոքրիկ

գառնուկ... սիրուն դունչ... Մայել էլ զիտէ: Գիտէ  
նաև շատ գւարճալի կերպով ցատկուել... (Նկարում  
է միշտ լուռ) ... Տեսէք, խոտի մի շիւղ բերնին, որ  
գեռ ծամել էլ չի կարող, զարմացած նայում է մօ-  
ռը ու չի կարողանում հասկանալ թէ այդ ինչ են  
անում նրան, ինչու են մագերը խուզում և մեծ  
մկրատը չրախկ—հա—չրախկ պատւ է գալիս կենդա-  
նու մէջքի վրայ... Մի վախենալ, սիրուն գառնուկ,  
այդ ոչինչ... Մայրիկիդ տաք շորերն են միայն հա  
նում, որ չը շորի ամառը... Այլևս ցուրտ չկայ. արել  
պայծառ փայլում է, ձիւնը հալւել է, ծաղիկները  
ժպտում են ամէն կողմից... Այդպէ՛ս, գառնուկ... Քեզ  
էլ այդպէս կանեն եկող տարի... Տեսէք, աղայը, աւե-  
լի սիրուն չի այժմ մեր ճերմակ գառնուկը... Չէի՞ք  
կամենալ, դու, նւարդ, և դու, Վահան, համբուրել գառ-  
նուկի սիրուն դնչիկը:

Նարդ. Օհ, այն օրիորդ, թոյլ տւէք գամ մի  
անգամ համբուրեմ:

Հայկանոյշ. Ո՛չ դեռ, սպասիր...

Վահան. Ես էլ կը համբուրեմ:

Ամէնքը. Մէնք էլ... Ես էլ... Ես էլ...

Մարիամ. Օրիորդ, որ թողնէք՝ ես ամբողջ օրը  
թևերիս վրայ կը պահեմ գառնուկին:

Աննա. Օրիորդ, մայրս ինձ մի կտոր շատ լաւ  
ժապաւէն է ընծայել... վարդագոյն ժապաւէն... Որ  
թողնէք՝ նրանից գառնուկին վզնոց կը շինեմ:

Կարապետ. Ամենափափուկ խոտերի տեղը գի-  
տեմ, օրինրդ:

Արամ. Է՛, խոտն ինչ է որ. խոտ ես էլ կը բե-  
րեմ...

Հայկանոյշ (Որ լրացրել էր նկարը, յանկարծ  
դառնում է զէպի աշակերտները՝ մատը վեր ցցած:  
Խիստ, սառը և զըեթէ դաժան կերպարանը է ստա-  
ցել. Ամէնքը սառում են յանկարծ և սարսափած  
նրան նայում)... Իսկ այժմ, տղայք, ահա թէ ինչ է  
հարկաւոր յայտնել ձեզ... ինչպէս լաւ զիտէք, աղ-  
ըելու համար՝ ուտել է պէտք... Իսկ կենդանիների մի-  
ոը, այդ էլ զիտէք, համով է և լաւ մնունդ է տա-  
լիս.. Դուք, ամէնքդ, ինարիկ, սիրում էք, օրինակ  
խաշած կամ տապակած մի կտոր գառան միս՝ զետ-  
նախնձորով. և այժմ ուրախութեամբ մի-մի պատառ  
կուտէիք, որովհետեւ քաղցել էք... Լաւ ուրեմն, քանի  
որ աշխարհիս կարգը այդպէս է և մարդիկ պիտի  
կենդանիների մսով կերակրւեն... մեզ մնում է ու-  
րեմն ինչ անել... (Մոտենում է, ամբիոնի վրայ զըը-  
ւած քանոնը ձեսք առնում)... Մեզ մնում է ձեռքը-  
ներս առնել մի դանակ և մեր գառնուկին մորթել...  
(Խորունկ լուռըթիւն է դասարանի մէջ). . Ուրեմն,  
մենք այժմ սկսենք մորթել մեր գառնուկը... Պատ-  
րաստութիւն տեսնենք... (Սկսում է նկարել. լուռ)  
Ահա մի փայտ՝ զրւած այդ երկու ծառերի ճիւղե-

րին... Նրանից մի կեռ, որից և պիտի կախենք մորթւած գառնուկը՝ քերթելու համար... Ահա և կոճղը, որի վրայ պիտի կտրենք գառնուկի զլուխը և մարմինն էլ կտոր-կտոր անենք... Ահա և դանակը... (Մանում է դպրոցի ծառան):

---

7

### ՆՈՅՆԻ; ԾԱՌԱՆ

Ժառան (Դռան շէմքին) Օրիորդ...  
Հայկանոյշ (Կանգ է առնում) Ի՞նչ կայ, Սարդիս:  
Ժառան. Եկել են պ. թեմական տեսուչը և մեր տեսուչը... խնդրում են խմացնել...

Միհրանեան. Անշուշտ... Պէտք է տեսչի մօտ գնալ... Լաւ ուրեմն, օրիորդ, գնանք առայժմ. յետոյ պարոն տեսուչների ճետ կը վերադառնանք և կը մորթենք գառնուկին...

(Առանց ետ նայելու թէ նա և թէ օրիորդը դուրս են գնում):

---

8.

### ՄԻԱՅՆ ԱՇԽԵՐՏՆԵՐԸ

(Մի բոպէ լուսթին է և անշարժութին. Ամէն-

քի աշբը զբասախասակին է ուղղուած։ Ապա շւարումով միմեանց են նայում):

Սուրեն (Յանկարծ ոստնում է իր տեղում, զանում է միւսներին) Ի՞նչպէս, պիտի վերադառնան և մորթեն գառնուկին... Եւ մենք պիտի թողնենք կտարելու այդ չարագործութիւնը։

Մարիամ. Օ՛ իմ խեղճ, ձերմակ գառնուկ...

Նարդ (Լուլագին) Թողնել որ գլուխը կտրեն, մարմինը յօշոտեն...

Կարապետ (Ոստնելով տեղիցը) Զը թողնենք, տղայք. Ճը թողնենք որ գառնուկին մորթեն։

Չայներ. Զը թողնենք... Կուի ելնենք... Դիմագրենք...

Սուրեն. Յառաջ ուրեմն, ընկերներ, պաշտպանենք գառնուկին...

Վահան. Զիւնենք ամէնքս... Ես այս քանոնը կը վերցնեմ։

Արամ. Ես էլ այս թանաքամանը։

Նարդ. Ես գառնուկի առաջը կը բռնեմ. թող առաջ ինձ սպանեն...

Մարիամ. Ես գրքերս կը նետեմ մորթողի դրւին... լինի նոյնիսկ տեսուչը...

Ամէնքը. Թոյլ չենք տալ մորթեն...

Սուրեն. Տղայք, եկէք պատնէշով պաշտպանենք գառնուկին և նրա ետևում կուի պատրաստենք։

Ամէնքը. Այս, այն, պատճէշ շինենք, պատճէշ...  
պատճէշ...

(Դուքս են ենում նստարաններից խառն ի  
խուռն: Խօսակցութիւն, իրարանցում...)

Կարապետ. Իսկ ինչով պատճէշը շինենք:  
Զայներ. Նստարաններով... սեղանով...  
Սուրբն. Այն, սեղանը... օրիորդի սեղանը... Հե-  
ռու կացէք որ սեղանը ըաշ տանք այս կողմը... Դէհ,  
բռնեցէք... Այս կողմը... քաշէք...

Զայներ. Էյ, զգոյշ, ոտների վրայ չընկնի...  
(Սեղանը շուր են տալիս՝ ոտները գէպի հասարա-  
կութիւնը) Դէհ, քաշէք այժմ... Քիչ հեռու... Շուռ  
տւէք...

Արամ. Շնոր տւէք... քիչ էլ այն կողմը...  
Սուրբն. Նստարաններն էլ բերենք՝ երկու կող-  
քերը փակելու համար... Շնոր, հիմա կը գան...  
Զայներ. Իրար վրայ դնենք... Հրէք... Քաշէք...  
Մի գոռաք... Քաշիք...

(Աղմուկի մէջ՝ սեղանը քաշում են զրատախ-  
տակի առաջ, զբասեղանները, նստարանները դար-  
սում են կողքերին, իրար վրայ հանում և ամէնքը  
խոնւում են պատճէշի առաջը, ետեր, ձախ ու աջ  
կողքերին: Պատճէշի բացւածքների ետևում երեսում  
են աշակերտուհիները՝ սպառնալից):

Արամ. Ես պատճէշի վրայ բարձրանամ... Դրօ-

շակ էլ շինենք... Վահան, քանոնը ինձ տուր... Ահա  
և թաշկինակ... (Կապում է և զրօշ շինում) Կեցցէ...  
Այժմ թող գան... (Սպառնալից) Մենք չենք  
թողնիլ որ մորթեն գառնուկը...

Զայներ. Պատճէշի շնորջը, տղայք... Կողքերին...  
Ետեռում...

Նարդ. Թողէք ես դուրսը կանգնեմ:  
Սուրբն. Ո՞չ ոք պատճէշի առաջ: Այստեղ միայն  
զօրավարի տեղն է:

Կարապետ. Ես կը լինեմ զօրավարը:  
Սուրբն. Դու ի՞նչ զօրավար ես որ... Էյ, տղայք,  
որին էք ընտրում զօրավար...

Զայներ. Քեզ... Սուրբնին... Սուրբնը թողլինի:  
Կարապետ. Լաւ, զնու եղիր:

Սուրբն. Այդպէս: Ես կապացուցանեմ որ զիտեմ  
կուրծք տալ, կուել ամէնից առաջին շարքում և ընկ-  
նել պատճէշի վրայ:

(Ակնցնում է սեղանի առաջ՝ թիկունքը պատճէ-  
շին) Եւ այժմ, ընկերներ, պատրաստ կենանք և չը  
թողնենք գառնուկին մորթելու:

Զայներ. Պատրաստ ենք... (Ակնում են մի մարշ):  
Արամ. Էյ, լուռ կացէք գեռ. գուցէ կուի պէտք

չը լինի. գուցէ բանակցենք և համոզենք...  
Նարդ. Ինչ որ էլ լինի՝ չը թողնենք դպչեն  
գառնուկին...

9.

ՆՈՅՆՔ. ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԽՉ, ԴՊՐՈՑԻ ՏԵՍՈՒԽՉԸ,  
ՀԱՅԱՆՈՅՑ, ՄԻՐԱՆՈՅՑ ԵՒ ՄԻՀՐԱՆԵԱՆ

(Այդ ամէնքը ներս են մտնում և տիրող աղմուկի ու տեղի ունեցող տեսարանի առաջ զարմացած՝ կանգ առնում: Նրանց ներս մտնելուն պէս՝ աշակերտները դիրքեր են բռնում և լսում: Մի բոլէ լուռ է):

Սուրէն (Գլուխը բարձր, ձեռքը ցցած) Մէնք չենք թոյլ տալ, որ մորթեն գառնուկին...!

Արամ (Գրօշը ձեռքին՝ կանգնել է պատնէշի զլսին) Եւ մինչեւ մեր արեան յետին կաթիլը կը կռւենք նրան պաշտպանելու համար:

Ամէնքը. Զենք թոյլ տալ... Մի մորթէք գառնուկին...

Տեսուչ (Ռւզում է առաջ գնալ) Այս ի՞նչ է, այս ի՞նչ խայտառակութիւն է...

Թեմ: Տեսուչ (Բարկացած) Վայ իջէք ամէնքդ... Շնուտ, անկարգ տղաներ, այդպէս էք հիւր ընդունում...

Միհրանեան (Նրանց առաջն է անցնում և չի թողնում որ մօտ գնան) Մ'չ, խնդրեմ... Մի բողէ

կանգ առէք և թողէք ինձ իմանալու, թէ ի՞նչ է այս ամենը, ի՞նչու այդ պատճէշը, ի՞նչ են ուզում փոքր բիկները:

(Ամէնքը կանգ են առնում: Խոյ լուսիթիւն է: Միհրանեանը զիսում է եղածը և մի քայլ զէպի պատնէշը զիսում: Նորից սկսում է ազմուկը):

Զայներ (Խառն ի խուռն) Մի մօտենաք... Զենք թոյլ տալ... Մի սպանէք գառնուկին... խղճացէք...

Մարիամ. Ես չեմ թոյլ տալ որ նրա արիւնը թափւի:

Նւարդ. Կանիծենք ձեզ, եթէ դիպչէք նրան...

Միհրանեան (Կանգ է առնում և հասկանում) Ա՛... Այդպէս ուրեմն... Նշանակում է, որ այս ամբողջ փոքրիկ հասարակութիւնը մէկ մարդու պէս ստքի է ելել թոյլ զոհին պաշտպանելու...

Տիգրանուհի. Օ՛հ, պարոն, միթէ գուք փոքրիկ ներ չունիք... Նայեցէք մէկ որքան լաւն է նա ու տնմեղ, որքան անօգնական... (Սկսում է լալ):

Նւարդ (Լալաղին և կատաղի) Ո՛չ, ես չեմ թոյլ տալ...

Սուրէն. Տղայք, կուի պատրաստենք...

Միհրանեան (Զեռը բարձրացնում է: Տիրում է լուսիթիւն: Յանկարծ ձեռքը զլսարկով ցնցում է օդի մէջ և ոգկորութեամբ գոշում) Թող չը մորթւի ուրեմն գառնուկը, որ այսքան հերոս պաշտպաններ ունի... Եւ թող կեցցեն մեծահոգի այս մանուկները...

(Սկզբում մի վայրկեան մանուկները, չը հաւատալով նայում են հիւրին և վարժուհիներին):

(Հիւրը և միւսները ժպտում են և հաւահութեան նշաններ անում):

Ամէնքը (Աշակերտները թռնում են ցած պատնէշից, գուրս են գալիս և սկսում պատնէշը բանդիլ: Տիրում է աղմուկ):

...Հուռուա, գառնուկին չեն մորթելու...

...Կեցցէ գառնուկը!...

...Կեցցէ մեր հիւրը!...

Սուրէն, Տղայք, այլին պէտք չունինք պատնէշին, քանդեցէք...

Նւարդ (Գրկում է վարժուհուն) Օ՛հ, սիրելի օրիորդ...

(Ազջիկները շրջապատում են ուսուցիչներին և հիւրին: Պատնէշը բանդողները սկսում են մի մարշ—երգ: Միհրանեանը զւարթ ծիծաղով սեղմում է նախ Սուրէնի, ապա և միւսների ձեռքերը: Ուրախ կանչ, ծիծաղ, աղմուկ և երգի մէջ վարագոյըը ծանր իջնում է):





ՀՀ Ազգային գրադարան



NL0402793

13490

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԵԿ

Հրատարակչ. Ընկերութեան գրասենեալի հասցեան  
Сергievская № 20